ԻՐԱՎՈՒՆՔԻ ԿՈՂՄ ՀԿ-Ն ԻՐԱԿԱՆԱՑՐԵԼ Է ԻՐ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԱԴՎՈԿԱՑԻՈՆ ՊԼԱՆԻ ՎԵՐԱՆԱՅՈՒՄ ԵՎ ՃԳՆԱԺԱՄԵՐԻ ԱՐՁԱԳԱՆՔՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ----------2
ՎԱՀԵ ԵՂԻԱԶԱՐՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՔՐԵԱԿԱՆ ՀԵՏԱՊՆԴՈՒՄԸ ԴԱԴԱՐԵՑՎԵԼ Է ՈՉ ԱՐԴԱՐԱՑՆՈՂ ՀԻՄՔՈՎ----------3
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ «ԻՐԱՎՈՒՆՔԻ ԿՈՂՄ» ԻՀԿ-Ի ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԲԱԺՆՈՒՄ ԱՌԿԱ ԳՈՐԾԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ 2023Թ-Ի ՀՈՒՆԻՍ ԱՄՍՎԱ----------4
«ԻՐԱՎՈՒՆՔԻ ԿՈՂՄ» ՀԿ-Ի ԹԻՄԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼ Է ՖՈՆԴԱՀԱՅԹԱՅԹՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՆ ՈՒԺԵՂԱՑՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՆԴԻՊՈՒՄ----------5
2023 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 1-ԻՑ ՄԻՆՉԵՎ 30 ԸՆԿԱԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ «ԻՐԱՎՈՒՆՔԻ ԿՈՂՄ» ԻՀԿ ԱՊԱՀՈՎ ՏԱՐԱԾՔ ԱՅՑԵԼԱԾ ՇԱՀԱՌՈՒՆԵՐԻ ԹԻՎ---6
ԻՐԱՎՈՒՆՔԻ ԿՈՂՄ ԻՐԱՎԱՊԱՇՏՊԱՆ ՀԿ-Ն ՀԱՄԵՐԱՇԽՈՒԹՅՈՒՆ Է ՀԱՅՏՆՈՒՄ ՌՈՒՍԱՍՏԱՆՈՒՄ ԱՊՐՈՂ ՏՐԱՆՍ ԵՎ ԼԳԲԻՔ ՀԱՄԱՅՆՔԻՆ՝ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԿՈՊՏՈՐԵՆ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՂ ՆՈՐ ՕՐԵՆԱԳԾՈՎ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾ----------7
КРИТИЧЕСКАЯ ПОДДЕРЖКА УКРАИНСКИХ И РОССИЙСКИХ ЛГБТИК-МИГРАНТОВ В АРМЕНИИ----------9
ԿԱՅԱՑԱՎ ՏՐԱՆՍ ԵՎ ԼԳԲԻՔ ՀԱՄԵՐԱՇԽՈՒԹՅԱՆ ՖՈՐՈՒՄԸ----------10
ԽՈՒԶԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ԹՄՐԱՆՅՈՒԹԵՐ ՉՀԱՅՏՆԱԲԵՐԵԼՈՎ՝ ՏՐԱՆՍ ԿՆՈՋԸ ՁԵՐԲԱԿԱԼԵԼ ԵՆ, ԱՊԱ ԱԶԱՏ ԱՐՁԱԿԵԼ----------11

ԻՐԱՎՈՒՆՔԻ ԿՈՂՄ ՀԿ-Ն ԻՐԱԿԱՆԱՑՐԵԼ Է ԻՐ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԱԴՎՈԿԱՑԻՈՆ ՊԼԱՆԻ ՎԵՐԱՆԱՅՈՒՄ ԵՎ ՃԳՆԱԺԱՄԵՐԻ ԱՐՁԱԳԱՆՔՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

«Իրավունքի կողմ» իրավապաշտպան հասարակական կազմակերպությունը Լեսբիների, Գեյերի, Բիսեքսուալների և Տրանսգենդերների Իրավունքների Շվեդական Ֆեդերացիայի (RFSL) ֆինանսական աջակցությամբ իրականացրել է հանդիպում կազմակերպության աշխատակիցների և կամավորների մասնակցությամբ: Հանդիպման նպատակն էր քննարկումներ միջոցով վերանայել և բարելավել կազմակերպության քաղաքականությունները, ադվոկացիոն պլանը, ռազմավարությունը և աշխատակազմին վերազինել ճգնաժամերի արձագանքման և դրանց դեմ արդյունավետորեն պայքարելու հմտություններով:

Հանդիպման ընթացքում ՀԿ-ի աշխատակազմը և կամավորները վերանայեցին «Իրավունքի կողմ» իրավապաշտպան հասարակական կազմակերպության քաղաքականությունները, որին հաջորդեց ճգնաժամների արձագանքման դասընթաց, որը նպատակ ունի օգնել թիմին պատրաստվել անսպասելի իրավիճակներին և արագ արձագանքել ճգնաժամերին:

Մասնակիցները կատարեցին կազմակերպության կառուցվածքի, շահերի բախման քաղաքականության, ադվոկացիոն պլանի, ռազմավարության, անվտանգությանը համապարփակ վերանայում: Նրանք ուսումնասիրեցին ռազմավարությունը՝ բացահայտելով դրա ուժեղ և թույլ կողմերը՝ ձգտելով վեր հանել բարելավման և նորարարության հնարավորությունները, որոնք կապահովեն կազմակերպության շարունակական առաջընթացը: Թիմը մտագրոհների ու թիմային աշխատանքների շնորհիվ մշակեց նոր մոտեցումներ՝ ուղղված մարտահրավերներին ավելի արդյունավետ և արդյունավետ դիմակայելուն:

Ճգնաժամերի արձագանքման դասընթացը հնարավորություն տվեց թիմի յուրաքանչյուր անդամի իմանալ իր դերն ու պատասխանատվությունը հնարավոր ճգնաժամի դեպքում, պատրաստ լինեն տարաբնույթ սցենարների, տիրապետել հստակ քայլերի հաջորդականության և կարողանալ վստահորեն գործողություններ ձեռնարկել՝ համաձայն կազմակերպության առաքելությանը և նպատակներին:

Ճգնաժամային արձագանքման դասընթացը բաղկացած էր հետևյալ փուլերից.

Փորձարկել, վերագնահատել, կատարելագործել կազմակերպության հակաճգնաժամային քաղաքականությունը:
Գնահատել կազմակերպության ճգնաժամերի կանխարգելման և արձագանքման գործողությունները:
Բացահայտել բացթողումները և ուժեղ կողմերը:
Կառուցել հակաճգնաժամային գործողությունների փորձ և հիշողություն թիմի անդամների մոտ:
Մշակել ճգնաժամերից վերականգնման քաղաքականություն:
«Իրավունքի կողմ» իրավապաշտպան հասարակական կազմակերպությունը, գնահատելով Հայաստանի Հանրապետությունում առկա ռիսկերը և հաշվի առնելով վերջին տարվա ընթացքում գրանցված բազմաթիվ բռնության և խտրականության դեպքերը, կարևորում է կազմակերպության քաղաքականությունների վերանայումը և պարբերաբար ճգնաժամերին արդյունավետ արձագանքելու դասընթացներ իրականացումը, որպեսզի աշխատակազմը վերազինված լինի անհրաժեշտ գիտելիքներով և կարողություններով:

ՎԱՀԵ ԵՂԻԱԶԱՐՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՔՐԵԱԿԱՆ ՀԵՏԱՊՆԴՈՒՄԸ ԴԱԴԱՐԵՑՎԵԼ Է ՈՉ ԱՐԴԱՐԱՑՆՈՂ ՀԻՄՔՈՎ

Ինչպես արդեն տեղեկացրել էինք, 2022 թվականի հուլիսի 31-ին «Իրավունքի կողմ» իրավապաշտպան հասարակական կազմակերպության նախագահ Լիլիթ Մարտիրոսյանը հաղորդում էր ներկայացնել այն մասին, որ Վահե Եղիազարյան աունով օգտատերը «YouTube» սոցիալական հարթակում հրապարակայնորեն բռնության կոչեր և սպանության սպառնալիքներ էր հնչեցրել տրանս անձանց հասցեին:

Տեսանյութի մեկնաբանություններում բազմաթիվ անձինք հնչեցրել են ատելության խոսք և բռնության սպառնալիք: Այդ դեպքից մի քանի օր առաջ, նույն անձը նաև ուղիղ եթերում հայհոյել և ծեծի էր ենթարկել տրանսգենդեր կին Ա.Ն.-ին Երևանի Ռոսիա կինոթատրոնի տարածքում: Բռնությունը ցուցադրող այդ տեսանյութը ակտիվորեն շրջանառվում էր համացանցում՝ ուղեկցվելով ատելության խոսքով և բռնության խրախուսանքի կոչերով: Դեպքի առթիվ Ա.Ն.-ն դիմում էր ներկայացվել ոստիկանություն: Նախաքննության ընթացքում Վահե Եղիազարյանն ընդունել է իր մեղքը, հատուցել տրանս անձ Ա.Ն.-ի կրած վնասները և հաշտվել վերջինիս հետ:

Արդյունքում Վահե Եղիազարյանի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցվել է ոչ արդարացնող հիմքով:

Միևնույն ժամանակ, հարուցված քրեական վարույթի ընթացքում մեկ այլ անձ՝ Կարեն Արայանը, ով խրախուսել էր Վահե Եղիազրյանին տրանսգենդեր անձանց նկատմամբ բռնություն գործադրելու հարցում և ում նույնպես մեղադրանք էր առաջադրվել բռնության հրապարակային կոչեր անելու համար, նշել է, որ որևէ բռնության կոչ չի հնչեցրել տրանսգենդեր անձանց նկատմամբ: Հույս ենք հայտնում, որ Կարեն Արայանը և Վահե Եղիազարյանը կդրսևորեն իրավահպատակ վարքագիծ՝ զերծ մնալով Տրանս և ԼԳԲԻՔ անձանց նկատմամբ որևէ ոտնձգություն կատարելուց:

«Իրավունքի կողմ» հասարակական կազմակերպությունը հետևողականորեն հավաքագրում և փաստագրում է Տրանս և ԼԳԲԻՔ անձանց նկատմամբ խտրականության և բռնության դեպքերը և ՀՀ ոստիկանությանը հորդորում պատշաճ հետաքննություն իրականացնել բռնարարներին հայտնաբերելու և օրենքի ողջ խստությամբ պատասխանատվության ենթարկելու համար:

Կրկին կոչ ենք անում՝

ՀՀ ոստիկանությանը, դատախազությանը, մարդու իրավունքների պաշտպանին և պատկան մարմիններին ապահովել Տրանս ԼԳԲԻՔ անձանց անվտանգությունը և ՀՀ սահմանադրությամբ նրանց տրված բոլոր իրավունքները:
Դիվանագիտական ներկայացուցիչներին, միջազգային ֆինանսավորողներին, որոնք իրենց ռեսուրսները և միջոցներն ուղղում են ՀՀ-ում արադարադատության բարելավմանը և հավասարության հաստատմանը, քայլեր ձեռնարկել կանխելու բռնությունը և խտրականությունը համայնքի անդամների նկատմամբ:

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«Իրավունքի կողմ» ԻՀԿ-ի իրավաբանական
բաժնում առկա գործերի վերաբերյալ 2023թ-ի հունիս ամսվա

29	ԻՐԱՎԱԿԱՆ ԸՆԹԱՑԻԿ ԳՈՐԾԵՐ
01	ԱՎԱՐՏԱԾ ԳՈՐԾ
02	ՄԻԵԴ-ՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԳՈՐԾԵՐԸ
32	ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆ
09	ԴԱՏԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՓՈՒԼՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԳՈՐԾԵՐԸ
08	ԴԱՏԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅՈՒՆ
13	ՆԱԽԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՓՈՒԼՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԳՈՐԾԵՐԸ
5	ՔՆՆՉԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ
10	ՆՈՐ ԴԻՄՈՒՄՆԵՐ

«ԻՐԱՎՈՒՆՔԻ ԿՈՂՄ» ՀԿ-Ի ԹԻՄԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼ Է ՖՈՆԴԱՀԱՅԹԱՅԹՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՆ ՈՒԺԵՂԱՑՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՆԴԻՊՈՒՄ

Սույն թվականի հունիսի 28-ին «Իրավունքի կողմ» իրավապաշտպան ՀԿ-ն իր գրասենյակում կազմակերպել էր ֆոնդահայթայթման ռազմավարության պլանավորման հանդիպում: Հանդիպումը իրականացվել է Ժողովրդավարության Եվրոպական Հիմնադրամի (EED) ֆինանսական աջակցությամբ, որը վեց տարի դրամաշնորհային ֆինանսավորում է տրամադրել «Իրավունքի կողմ» իրավապաշտպան ՀԿ-ին: EED-ի ծրագրի ավարտին նախատեսված էր անցկացնել այս հանդիպումը, որպեսզի կազմակերպությունը գնահատի և ուժեղացնի իր ֆոնդահայթայթման ռազմավարությունը՝ հետագա քայլերը պլանավորելով այնպես, որ առաջիկա տարիներին ունենա կայուն ֆինանսական վիճակ և շարունակի աշխատել ի բարօրություն Տրանս ԼԳԲԻՔ և սեքս աշխատող համայնքների:

Հանդիպման ընթացքում ՀԿ-ի ֆոնդահայթայթման պատասխանատուն աշխատակազմին ներկայացրեց արդյունավետ դրամահավաքի հիմնական ասպեկտները: Թիմը համակողմանիորեն ծանոթացավ կազմակերպության հիմնական դոնորներին և ուսումնասիրեց նոր դոնորների ներգրավման հնարավոր ուղիները: Վերլուծելով ֆոնդահայթայթման ներկայիս լանդշաֆտը՝ անձնակազմը բացահայտեց բարելավման ուղիները, ընդլայնեց հնարավոր աջակցության բազան՝ կազմելով դոնորների ցուցակ, և այդ ամենի հիման վրա մշակեց կազմակերպության հաջորդ 3 տարիների ֆոնդահայթայթման ռազմավարությունը: Բացի ֆոնդահայթայթման ռազմավարության վերանայումից, հանդիպման ընթացքում «Իրավունքի կողմ» իրավապաշտպան ՀԿ-ի աշխատակիցները վերանայել են ՀԿ-ի ֆինանսական քաղաքականությունը և կատարել անհրաժեշտ ճշգրտումներ՝ վստահ լինելու համար, որ ֆինանսական քաղաքականությունը համապատասխանում է լավագույն փորձին: Օպտիմալացնելով իր ֆինանսական քաղաքականությունը՝ կազմակերպությունը նպատակ ունի բարձրացնել թափանցիկությունը, հաշվետվողականությունը և վստահությունը ինչպես դոնորների, այնպես էլ աջակիցների առջև:

Հանդիպումը նաև խթանեց թիմային համագործակցությանը. ներգրավելով ողջ անձնակազմին այս գործընթացում՝ «Իրավունքի կողմ» իրավապաշտպան ՀԿ-ն երաշխավորեց, որ յուրաքանչյուր անդամ իր մասնակցությունն ունենա կազմակերպության ապագա ֆինանսական կայունության և հաջողության մեջ:

Ցանկանում ենք նշել, որ շնորհիվ Ժողովրդավարության Եվրոպական Հիմնադրամի (EED) շարունակական աջակցության «Իրավունքի կողմ» իրավապաշտպան ՀԿ-ն փոքր կազմակերպությունից զարգացել, հզորացել և տարիների ընթացքում դարձել է Հայաստանում և տարածաշրջանում առաջատար Տրանս և սեքս աշխատողների համայնքային կազմակերպություն, որը, անկախ վերջին տարիներին Covid19-ով և պատերազմով պայմանավորված ճգնաժամերից, շարունակել է իր աշխատանքները և իրականացնել բազմաթիվ տեղական և միջազգային ծրագրեր: Այդ ծրագրերի և կազմակերպության վարած ադվոկացիոն քաղաքականության շնորհիվ փոփոխություններ են գրանցվել պետական մարմինների պրակտիկաներում՝ ի շահ Տրանս և ԼԳԲԻՔ անձանց: Բացի այդ, Ժողովրդավարության Եվրոպական Հիմնադրամի ֆինանսական աջակցության շնորհիվ «Իրավունքի կողմ» իրավապաշտպան ՀԿ-ն կարողացել է տարիներ շարունակ Տրանս ԼԳԲԻՔ և սեքս աշխատող անձանց, նրանց ընտանիքի անդամներին և համակիրներին տրամադրել անվճար իրավաբանական և հոգեբանական աջակցություն և կազմակերպել կրթական միջոցառումներ: Այժմ՝ EED-ի ծրագրի ավարտին, «Իրավունքի կողմ» իրավապաշտպան ՀԿ-ն վստահ է, որ նոր մշակված ֆոնդահայթայթման քաղաքականության ներդրմամբ, կազմակերպությունը պատրաստ է հաղթահարել առաջիկա մարտահրավերները և շարունակելու է պաշտպանել Տրանս և ԼԳԲԻՔ անձանց իրավունքները նույն նախաձեռնողականությամբ:

2023 թվականի հունիսի 1-ից մինչև 30 ընկած ժամանակահատվածում «իրավունքի կողմ» իհկ ապահով տարածք այցելած շահառուների թիվ





ԻՐԱՎՈՒՆՔԻ ԿՈՂՄ ԻՐԱՎԱՊԱՇՏՊԱՆ ՀԿ-Ն ՀԱՄԵՐԱՇԽՈՒԹՅՈՒՆ Է ՀԱՅՏՆՈՒՄ ՌՈՒՍԱՍՏԱՆՈՒՄ ԱՊՐՈՂ ՏՐԱՆՍ ԵՎ ԼԳԲԻՔ ՀԱՄԱՅՆՔԻՆ՝ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԿՈՊՏՈՐԵՆ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՂ ՆՈՐ ՕՐԵՆԱԳԾՈՎ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾ

Սույն թվականի հուլիսի 14-ին Ռուսաստանի Դաշնության Պետդուման ընդունել է նոր օրինագիծ, որը բացառապես արգելում է ցանկացած «բժշկական միջամտություն՝ ուղղված անձի սեռը փոխելուն», ինչպես նաև անվավեր է ճանաչում գենդերի իրավական ճանաչումը տրանս անձանց համար պաշտոնական փաստաթղթերում և հանրային գրառումներում:

Ցավոք, այս օրինագիծը Ռուսաստանի Տրանս և ԼԳԲԻՔ համայնքի իրավունքների սահմանափակման միակ դեպքը չէ. վերջին տասնամյակում Ռուսաստանում գրանցվել է օրենսդրական զարգացումների մտահոգիչ էսկալացիա, ինչը խորապես խախտում է Տրանս և ԼԳԲԻՔ անձանց իրավունքները: 2013 թվականին «գեյ քարոզչության» օրենքի ընդունմամբ սկսվեցին ԼԳԲՏԻՔ համայնքի դեմ պետական հալածանքները, որոնք շարունակվում են մինչ օրս: Այս նոր օրինագծի հնարավոր հետևանքները չափազանց մտահոգիչ են՝ փորձագետները պնդում են, որ այն կբերի տրանս անձանց շրջանում ինքնասպանությունների թվի աճի: Բացի այդ, հորմոնային թերապիայի արգելքը կարող է հանգեցնել հորմոնային դեղորայքի սև շուկայի ստեղծմանը՝ վտանգի տակ դնելով տրանս անձանց առողջությունն ու անվտանգությունը: Խիստ մտահոգիչ է նաև, որ օրինագիծը անվավեր է ճանաչում գենդերի իրավական ճանաչումը, ինչը տրանս անձանց իրավական անորոշության մեջ է դնում և ավելի խոցելի դարձնում խտրականության, ոտնձգությունների և բռնության նկատմամբ:

«Իրավունքի կողմ» ՀԿ-ն, որպես տրանս և սեքս աշխատողների համայնքահեն իրավապաշտպան կազմակերպություն, խստորեն դատապարտում այս օրինագծի ընդունումը Ռուսաստանում, որը էլ ավելի է մարգինալացնում և խտրականություն ենթարկում Տրանս և ԼԳԲԻՔ համայնքին: Տրանսսպեցիֆիկ առողջապահությունը համապարփակ առողջապահական խնամքի էական բաղադրիչ է, որը խթանում է տրանս անձանց հոգեկան առողջությանը և սոցիալական ներառականությանը: Սահմանափակելով տրանսսպեցիֆիկ առողջապահությունը և գենդերի իրավական ճանաչումը՝ օրինագիծը քայքայում է քաղաքացիների իրավահավասարության սկզբունքը և հավերժացնում խտրականությունը ու բռնությունը Տրանս և ԼԳԲԻՔ անձանց նկատմամբ:

Մենք մեր անսասան համերաշխությունն ենք հայտնում Ռուսաստանի Տրանս և ԼԳԲԻՔ անձանց, որոնց իրավունքներն ու բարեկեցությունը այսօր վտանգի տակ են: «Իրավունքի կողմ» իրավապաշտպան ՀԿ-ն, Ռուսաստանի կողմից Ուկրաինաի վրա հարձակումից ի վեր, իր շահառուների ցուցակում ընդգրկել է հարյուրավոր ԼԳԲՏԻՔ ներգաղթյալներ Ռուսաստանից և Ուկրաինաից: Մենք շարունակելու ենք օգնություն տրամադրել և պայքարել հանուն Տրանս և ԼԳԲԻՔ անձանց իրավահավասարության ու բարեկեցության ոչ միայն Հայաստանի Հանրապետությունում, այլև տարածաշրջանում: Միասին մենք պետք է կառուցենք ապագա, որտեղ յուրաքանչյուր անհատի իրավունքները պաշտպանված և հարգված կլինեն՝ անկախ նրաց գենդերային ինքնությունից և սեռական կողմնորոշվածությունից:

КРИТИЧЕСКАЯ ПОДДЕРЖКА УКРАИНСКИХ И РОССИЙСКИХ ЛГБТИК-МИГРАНТОВ В АРМЕНИИ

RIGHT SIDE
HUMAN RIGHTS DEFENDER NGO

С момента вторжения России в Украину в 2022 году и в связи с новым преследованием ЛГБТИК со стороны правительства России имели место масштабные миграционные потоки граждан этих стран, оказавшихся в тяжелом положении в результате конфликта и преследований, в Республике Армении. Представители уязвимых сообществ, которые сталкиваются с социальной изоляцией и ограниченным доступом к жизненно важным ресурсам, особенно страдают от кризисов, о чем свидетельствуют обращения сотен транс и ЛГБИК-иммигрантов, которые были включены в список бенефициаров НГО за последние годы. Признавая проблемы, с которыми сталкиваются транс и ЛГБТИК-иммигранты, правозащитная НГО «Правая сторона» при финансовой поддержке OutRight International инициирует новую программу по оказанию социальной поддержки ЛГБТИК людям из России и Украины, проживающим в Армении.

Согласно статистическим данным Миграционного комитета РА, всего в 2022 году вид на жительство в Республике Армения получили 8 562 гражданина России и 385 граждан Украины, из которых 19 граждан России и 484 гражданина Украины также запросили убежище. В 2023 году миграционные потоки продолжаются и ожидается, что вскоре будет зарегистрирован новый приток транс и ЛГБИК-иммигрантов в связи с принятием Государственным Думом, РФ 14 июля этого года нового законопроекта, который исключительно запрещает любое «медицинское вмешательство, направленное на изменение пола человека», а также делает недействительным юридическое признание пола в официальных документах для трансгендеров.

Кто может подать заявку?

ЛГБТИК-лица из России или Украины, которые в настоящее время проживают в Республике Армении, могут подать заявление на получение социальной помощи. Правозащитная общественная организация «Правовая сторона» Должна формировать специальный комитет, ответственный за тщательное рассмотрение каждого заявления и оценку потребностей. После рассмотрения заявлений членами комиссии лиц, обратившиеся за помощью, получат ответ в течении десяти дня. Чтобы подать заявку, пожалуйста, заполните следующую форму.

Правозащитная неправительственная организация «Правовая сторона» всегда стояла на стороне маргинализированных групп и была в авангарде защиты и поддержки прав ЛГБТИК-сообщества. С помощью таких программ мы стремимся создать атмосферу солидарности и создать равноправное и инклюзивное общество, в котором будут защищаться и уважаться права и достоинство каждого человека.

Свяжитесь с нами для вопросов или дополнительной информации

Правозащитная организация “Правовая сторона”

Телефон: (+374) 11 880770
Электронная адрес: rightsidengo@gmail.com
Время работы: 12:00-19:00
24 июля 2023 Армения Ереван

ԿԱՑԱՑԱՎ ՏՐԱՆՍ ԵՎ ԼԳԲԻՔ ՀԱՄԵՐԱՇԽՈՒԹՅԱՆ ՖՈՐՈՒՄԸ

«Իրավունքի կողմ» իրավապաշտպան հասարակական կազմակերպությունը ԻԼԳԱ Եվրոպայի ֆինանսական աջակցությամբ սույն թվականի հուլիսի 3-ին կազմակերպել էր Տրանս և ԼԳԲԻՔ Համերաշխության առցանց ֆորում, որը նպատակ ուներ համախմբել տարածաշրջանի Տրանս և ԼԳԲԻՔ համայնքի ներկայացուցիչներին, Արևելյան Եվրոպայի ու Կենտրոնական Ասիայի տրանս ակտիվիստներին՝ խթանելու փորձի և գիտելիքների փոխանակումը և ամրապնդելու համերաշխությունը ԼԳԲՏԻՔ անձանց շրջանում:

Տրանս և ԼԳԲԻՔ Համերաշխության առցանց ֆորումը մոդերացնում էր Միլենա Աբրահամյանը, իսկ բանախոսներն էին «Իրավունքի կողմ» իրավապաշտպան հասարակական կազմակերպության նախագահ Լիլիթ Մարտիրոսյանը Հայաստանից, Քորրաս խմբի հիմնադիր անդամ Զաքարիա Նասերը Լիբանանից և տրանս ակտիվիստ Քանիքեյ Քըզըն Ղրղզստանից: Լիլիթ Մարտիրոսյանը իր խոսքում ներկայացրեց իրավիճակը Հայաստանում՝ անդրադառնալով տարածաշրջանում ռուս-ուկրաինական պատերազմով պայմանավորված ճգնաժամին և դրա հետևանքներին, իրավապաշտպանների նկատմամբ սաստկացող ճնշումներին և տրանս անձանց նկատմամբ շարունակական բռնության և խտրականության դեպքերին: Զաքարիա Նասերը ներկայացրեց, թե ինչպես է Լիբանանի ծանր տնտեսական դրությունը (այս տարվա մարտին Լիբանանի տարեկան գնաճը հասել է 264 տոկոսի) բացասական ազդեցություն թողել ԼԳԲՏԻՔ անձանց կյանքի և ԼԳԲՏԻՔ անձանց իրավունքներով զբաղվող կազմակերպությունների ֆինասավորման աղբյուրներ գտնելու վրա: Ապա տրանս ակտիվիստ Քանիքեյ Քըզըն մասնակիցներին ծանոթացրեց Կենտրոնական Ասիայի երկրների իրավիճակին՝ հանգամանալից անդրադառնալով յուրաքանչյուր երկրում տրանս անձանց խնդիրներին և իրավական դրությանը: Նա նշեց, որ չնայած առանձին երկրների միջև տարբերություններին, ամբողջ աշխարհում տրանս անձանց խնդիրները բավականին նման են, և դրանց լուծում տալու համար շատ կարևոր են փորձի փոխանակման նմանատիպ հանդիպումները: Բանախոսների ելույթներին հաջորդեց ինտերակտիվ հարց ու պատասխանի մաս, որի ընթացքում մասնակիցները հնարավորություն ստացան անմիջականորեն ներգրավվել երկխոսության մեջ և ստանալ իրենց հուզող հարցերի պատասխանները:

Կազմակերպելով նման միջոցառումներ՝ «Իրավունքի կողմ» իրավապաշտպան ՀԿ-ն նպատակ ունի ստեղծել հարթակ նոր կապեր հաստատելու, փորձի փոխանակման և միմյանց ակտիվիզմից ներշնչվելու համար: Մենք հավատում ենք, որ, միավորվելով և միմյանցից սովորելով, կարող ենք ստեղծել ավելի ներառական և աջակցող միջավայր բոլոր ԼԳԲՏԻՔ անձանց համար ամբողջ աշխարհում:



ԽՈՒԶԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ԹՄՐԱՆՅՈՒԹԵՐ ՉՀԱՅՏՆԱԲԵՐԵԼՈՎ՝ ՏՐԱՆՍ ԿՆՈՋԸ ՁԵՐԲԱԿԱԼԵԼ ԵՆ, ԱՊԱ ԱԶԱՏ ԱՐՁԱԿԵԼ

Սույն թվականի հուլիսի 27-ին՝ առավոտյան ժամը 9:30-ին, «Իրավունքի կողմ» իրավապաշտպան հասարակական կազմակերպություն էր զանգահարել տրանս կին Հ.Տ.-ն և հայտնել, որ այդ պահին իր բնակարանում ոստիկանությունը իրականացնում է խուզարկություն: Հ.Տ.-ն նաև նշել էր, որ քննիչի խոսքով՝ իրեն պատրաստվում են ձերբակալել: Ինչպես հետագայում պարզ դարձավ, բնակարանում խուզարկություն իրականացվում էր թմրանյութ հայտնաբերելու նպատակով, սակայն ոչինչ չհայտնաբերելուց հետո, տրանս կնոջից առգրավել են նրա անձնական օգտագործման երեք հեռախոսները, համակարգիչը, ինչպես նաև բնակարանում առկա ողջ զումարը:

Հիշեցնենք, որ մոտ երկու ամիս առաջ՝ սույն թվականի հունիսի 11-ին, նույն տրանս կինը երկու տղամարդու կողմից իր իսկ բնակարանում ենթարկվել էր դաժան ծեծի, և նրանից դանակի սպառնալիքով գողացել էին բջջային հեռախոսը:
«Իրավունքի կողմ» իրավապաշտպան ՀԿ-ի փաստաբանները զանգից անմիջապես հետո ուղեվորվել են Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական բաժին, որտեղ խուզարկությունից հետո բերման էր ենթարկվել տրանս կին Հ.Տ.-ն: ՀԿ-ի իրավաբանական թիմը տեսակցություն է ունեցել վերջինիս հետ և ստանձնել նրա պաշտպանությունը: Մի քանի ժամ անց Հ.Տ.-ին տեղափոխել են Քննչական կոմիտե, որտեղ և իր պաշտպանների ներկայությամբ հարցաքննվելուց հետո, ժամը 16:25-ին ազատ է արձակվել՝ վերջինիս անազատության մեջ պահելու անհրաժեշտությունը վերանալու հիմքով:

«Իրավունքի կողմ» իրավապաշտպան հասարակական կազմակերպության իրավաբանական թիմը ներգրավված է ինչպես նախորդ, այնպես էլ այս գործի շրջանակներում և ապահովելու է իրավական ներկայացուցչություն գործի բոլոր փուլերում:
«Իրավունքի կողմ» հասարակական կազմակերպություն հետևում է Տրանս և ԼԳԲԻՔ անձանց մասնակցությամբ քրեական գործերի ընթացքին, հետևողականորեն փաստագրում ու հավաքագրում խտրականության ու բռնության դեպքերը և իր ուշադրության կենտրոնում է պահելու նաև այս գործը՝ ՀՀ ոստիկանությանը հորդորելով իրականացնել պատշաճ հետաքննություն:

Թմրանյութ պահելու պատրվակով տրանս կնոջ բնակարանը խուզարկել են, նրան ձերբակալել, ապա ազատ արձակել

RIGHT SIDE

HUMAN RIGHTS DEFENDER NGO

RightSideNGO.com

rightsidengo@gmail.com

RightSideNGO

RightSideNGO

RightSideNGO

+374 - 11 - 880 - 770

© Copyright All Rights Reserved For Right Side Ngo.